ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՉԱՐԵՆՑ-ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 005-Ա որոշման համաձայն, համայնքում հանրային բաց լսումների և /կամ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան՝ 2022 թվականի մայիսի 2-ին, ժամը 10:00-ին Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Աբովյան փողոցի Չարենց-Բաղրամյան հատվածի հիմնանորոգման աշխատանքների ծրագրային հայտի վերաբերյալ: Քննարկումն անցկացնում էր համայնքի ղեկավար Դավիթ Խուդաթյանը: Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Համայնքի ղեկավար Դավիթ Խուդաթյանը մասնակիցներին ներկայացրեց առկա հնարավորություններով պայմանավորված՝ վերոհիշյալ ճանապարհահատվածի հիմնանորոգման կարևորությունը՝ հատկապես, որ ներկայումս ընթանում են ջրագծերի նորով փոխարինման աշխատանքներ: Նախատեսվող աշխատանքների իրականացման արդյունքում Արմավիր քաղաքի կենտրոնական փողոց հանդիսացող Աբովյան փողոցի նշված ճանապարհահատվածը, ունի կարևոր նշանակություն՝ քաղաքի ընդհանուր երթևեկությունը լիցքաթափելու համար:

Հանրային քննարկման մասնակիցների հետ ծավալվեց հետաքրքիր հարց ու պատասխան:

Դավիթ Խուդաթյանը նշեց, որ հարցը հրատապության կարգով կքննարկվի ավագանու արտահերթ նիստում:

Դ. Խուդաթյանի կողմից կարևորվեց հանրային լսումների անհրաժեշտությունը, որոնք վերհանում են հանրային կարծիքը և կարևորում հետագա հետևողական թափանցիկ գործելաոճը՝ ի շահ համայնքի բնակիչների առջև ծառացած խնդիրների լուծման:

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԸ